— Միայն մի գիւղ չէ, պարոն բժշկապետ, — խօսեց նա դարձեալ զայրացած եղանակով, — մեր ամբողջ ծովեզերքի բնակիչները նոյն հոգին եւ նոյն սիրտն ունեն: Ի հարկէ, մենք այժմ այն չենք անում, ինչ որ առաջ անում էինք. մենք այժմ իզուր տեղը ոչ ոքին վնաս չենք տալիս: Եթէ առաջ շատ անգամ բոլորովին անմեղ մարդկանց բռնում եւ մորթում էինք, այդ նրա համար էր, որ մեր թշնամիներին ցոյց տանք, թէ տեսէ՛ք, եթէ դուք չարութիւն կանէք, մենք էլ ընդունակ ենք նոյնն անելու, լաւն այն է, որ ո՛չ դուք անէք եւ ո՛չ մենք, այլ ապրենք միասին, որպէս բարի դրացիներ: Եւ այդպէս էլ եղաւ. մեր ցոյցերից յետոյ քրդերը բարեկամացան մեզ հետ, որովհետեւ նրանք գիտեն յարգել քաջութիւնը: Այժմ շատ դէպքերում, երբ նրանք կռիւ ունեն միմեանց հետ, մեր օգնութեանն են դիմում:

— Իսկ եթէ ձե՞զ հարկաւոր լինի նրանց օգնութիւնը:

— Չեն խնայի:

Ես մտաբերեցի Թոխմախ-Արթինի առածը. «թուրքին ծեծի՛ր, հետը բարեկամացի՛ր» :

Ասլանը հարցրեց.

— Ինձ շատ զարմացնում է այն, թէ ի՞նչ հրաշքով կատարուեցաւ ձեր կեանքում այդ մեծ փոփոխութիւնը, որ դուք ձեր վաղեմի ստրկութիւնից (որը այլ բառերով սովորել էիք հնազանդութիւն եւ համբերութիւն կոչել) յանկարծ դուրս եկաք եւ սկսեցիք անձնապաշտպանութեան դիմել: Ո՞վ մտցրեց ձեր մէջ այդ միտքը եւ այդ հոգին: Ո՞վ սովորեցրեց ձեզ ընտրել զէնքը որպէս գլխաւոր միջոց եւ գրաւական՝ թէ՛ թշնամու եւ թէ՛ բարեկամի հետ խաղաղութիւն պահպանելու:

— Մենք այդ բոլոր փոփոխութիւններով պարտական ենք մեր սիրելի վարժապետին, — պատասխանեց ռեսը: — Նա բաց արեց թէ՛ մեր աչքերը եւ թէ՛ մեր կապած, կաշկանդած ձեռքերը: Նա մտցրեց մեր մէջ անձնապաշտպանութեան ոգին, սովորեցրեց բարեկամի հետ բարեկամ լինել, թշնամու հետ թշնամի, եթէ չհաճի բարեկամանալ: Նա մեզ հետ քաջութեամբ մասնակցում էր այն բոլոր գործերում, որ կատարուեցան վերջին տարիներում: Բայց որքա՜ն գործեր կատարուեցան այդ ժամանակներում... Որքա՜ն զոհեր տուեցինք մենք, մինչեւ կարողացանք փոքր ի շատէ ապահովել մեր դրութիւնը... Աղէտալի՜, շատ աղէտալի՜ էին այդ ժամանակները... մենք միշտ արիւնոտ ձեռքով էինք ուտում մեր հացը, եթէ մի րոպէ միջոց էինք գտնում ուտելու...